

*ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ*

**Համախառն ներքին արդյունք**

**Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)** բնութագրում է երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների ու ծառայությունների (հանած միջանկյալ սպառումը) արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և գուտ արտահանման համար: ՀՆԱ-ի եռամսյակային և տարեկան ցուցանիշների հաշվարկի համար հիմք են հանդիսանում, հիմնականում, ՀՀ վիճակագրական կոմիտեի ամփոփ, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության տվյալները: ՀՆԱ-ն հաշվարկվում է 3 եղանակներով՝ արտադրական, եկամուտների ձևավորման և եկամուտների օգտագործման (ծախսային):

**Արտադրական եղանակով ՀՆԱ-ն**, շուկայական գներով, հաշվարկվում է որպես տնտեսությունում ըստ գործունեության տեսակների արտադրված համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) ու արտադրանքի գուտ հարկերի (առանց սուբսիդիաների) հանրագումար: Ընդ որում, ըստ գործունեության տեսակների ավելացված արժեքի ծավալը որոշվում է ապրանքների և ծառայությունների թողարկման և միջանկյալ սպառման տարբերությամբ: Նախորդ տարվա համադրելի գներով տվյալների վերագնահատումը կատարվում է կրկնակի դեֆլատավորման եղանակով:

**Եկամուտների օգտագործման եղանակով (ծախսային եղանակ) հաշվարկված ՀՆԱ-ն ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և գուտ արտահանման հանրագումարն է:**

Վերջնական սպառման ծախսերը հաշվարկվում են մանրածախ առևտրաշրջանառության՝ ճշգրտված չկազմակերպված շուկայում գնումների ծավալով, վճարովի ծառայությունների ծավալի, անձնական սպառման համար սեփական արտադրության արտադրանքի, պետական հիմնարկների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի հիման վրա: Այն ցույց է տալիս, թե ինչպես են տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները բաշխում իրենց տնօրինվող եկամուտը վերջնական սպառման և խնայողությունների միջև: Համախառն կուտակումն արտադրության նոր միջոցների արտադրության ((մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ և շինություններ (այդ թվում՝ բնակարանային)) վրա կատարվող ծախսերի և ապրանքանյութական պաշարների փոփոխության հանրագումարն է: Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման վերաբերյալ տվյալները ստացվում են ՀՀ վճարային հաշվեկշռից:

**Ըստ եկամուտների աղբյուրների, ՀՆԱ-ն ձևավորվում է** ֆինանսական, ոչ ֆինանսական կազմակերպությունների, տնային տնտեսությունների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացած սկզբնական եկամուտներից: Մակայն այն անկախ հաշվարկ չի համարվում, քանի որ, ընդունված մեթոդաբանության համաձայն, եկամտային ոչ բոլոր ցուցանիշներն են ստացվում ուղղակի հաշվառմամբ, դրանց մի մասը հաշվարկվում է հաշվեկշռման եղանակով:

Այս հաշվարկներում համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը) հանդիսանում է հաշվեկշռող հողված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված շուկայական գներով ՀՆԱ-ի և աշխատողների աշխատանքի վարձատրության ու արտադրության և ներմուծման գուտ հարկերի տարբերություն:

*ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլատորն*՝ ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունն է՝ նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալին:

### **Տնտեսական ակտիվության ցուցանիշ**

*Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՅ)* երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշ է: Այն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները և սկզբնապես յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է նախորդ տարվա միջին տարեկան թողարկման ծավալի նկատմամբ, ինչը հնարավորություն է տալիս ունենալ տվյալ ամսվա արտադրանքի թողարկման ծավալի իրական փոփոխությունը նախորդ ամսվա և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ և ստեղծել ՏԱՅ-ի ժամանակագրական շարքեր՝ շղթայակապ ինդեքսներ: Յուրաքանչյուր ամսվա համար այն իրենից ներկայացնում է ամբողջ տնտեսության համար մեկ ագրեգացված ցուցանիշ՝ ինդեքսի տեսքով:

Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի իրական ծավալի ինդեքսի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն), ամսական ՏԱՅ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՅ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶՕ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

ՏԱՅ-ը հաշվարկվում է ՀՀ ՎԿ վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հավաքագրվող և վարչական ռեգիստրներից ստացվող դիսկրետ (զուտ) ամսական տվյալների հիման վրա՝ կիրառելով նախորդ տարվա միջին տարեկան գների նկատմամբ գների ինդեքսները: Տնտեսական գործունեության տեսակների իրական ծավալի հաշվարկված ինդեքսներն ագրեգացվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի զուտ հարկերի և ՖՄԱԶՕ) այդ գործունեության տեսակների ունեցած կշիռները:

*ՏԱՅ-ի վերանայման հիմքը*՝ տարեկան ՀՆԱ-ում (առանց արտադրանքի զուտ հարկերի և ՖՄԱԶՕ) տնտեսական գործունեության տեսակների կշիռների փոփոխությունն է: ՏԱՅ-ի ամբողջական գնահատականների վերանայումները պայմանավորված են տարեկան ՀՆԱ-ի վերանայման ժամանակացույցով, որն արտացոլված է Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերում, ըստ որի վերջնական հաշվետու տվյալներով տարեկան ՀՆԱ-ի գնահատականները հասանելի են հաշվետու տարվա ավարտից 1 տարի և 4 ամիս հետո, իսկ դրան հաջորդող տարվա վերանայված գնահատականները՝ տարվա ավարտից 4 ամիս հետո: Հաշվի առնելով, որ տարեկան ՀՆԱ-ի առաջին գնահատականներն առկա են լինում տարվա ավարտից հետո 90-րդ օրը, ապա ընթացիկ տարվա առաջին 3 ամիսների համար ՏԱՅ-ը, որպես նախնական, հաշվարկվում է՝ հիմնվելով նախորդ տարվան նախորդող տարվա վերանայված ՀՆԱ-ի կշիռների վրա:

### **Արդյունաբերություն**

**Արդյունաբերական արտադրանքի ծավալը**, արժեքային արտահայտությամբ, որոշվում է որպես արդյունաբերական կազմակերպությունների (ներառյալ առանձնացված ստորաբաժանումները) կողմից թողարկված արտադրանքի, կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալների հանրագումար: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերված են ընթացիկ գներով, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: Պատվիրատուի հումքից և նյութերից (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում) թողարկված արտադրանքը, ընթացիկ գներով, արդյունաբերական արտադրանքի ծավալը ներառվում է առանց այդ հումքի և նյութերի արժեքի:

Կազմակերպության կողմից թողարկված արտադրանքի ծավալը որոշվում է առանց ներքին շրջանառության արժեքի: Կազմակերպության ներքին շրջանառություն է համարվում արտադրված պատրաստի իրերի և կիսաֆաբրիկատների այն մասի արժեքը, որն օգտագործվում է տվյալ կազմակերպության կողմից սեփական արդյունաբերաարտադրական կարիքների համար:

**Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը** բնութագրում է արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկայի փոփոխությունն արժեքային արտահայտությամբ: Հաշվարկվում է արտադրանքի ծավալները համադրելիության բերելու միջոցով: Արտադրանքի գնահատականը, համադրելի գներով, իրականացվում է արդյունաբերողների գների ինդեքսի հիման վրա: Համադրելի գներով արդյունքը հաշվետու տարվա թողարկումն է ըստ ամիսների, վերահաշվարկված ըստ նախորդ տարվա համապատասխան ամիսների գների:

**Իրացված արտադրանքի ծավալը**՝ հաշվետու ժամանակաշրջանում իրացված սեփական արտադրանքի, ինչպես նաև պատվիրատուի կողմից ընդունված, կատարված աշխատանքների և ծառայությունների արժեքն է՝ անկախ այն բանից, թե դրանց վճարները կազմակերպության հաշվարկային հաշվին մուտքագրվել են, թե ոչ:

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ**, որպես կանոն, բերվում է ըստ արտադրանքի համախառն թողարկման, այսինքն ներառյալ կազմակերպության ներսում արդյունաբերաարտադրական կարիքների համար ծախսված և պատվիրատուի հումքից թողարկված արտադրանքը:

### **Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և ձկնաբուծություն**

**Գյուղատնտեսության համախառն արտադրանքը** բուսաբուծության, անասնաբուծության արտադրանքի և ոլորտում մատուցված ծառայությունների գումարն է արժեքային արտահայտությամբ՝ տվյալ տարվա ընթացիկ գներով: Ցուցանիշը հաշվարկվում է բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև ընտրանքային դիտարկման (12 090 գյուղացիական տնտեսություններ) տվյալներով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կազմում չեն ընդգրկվում անտառաբուծության, ձկնորսության և ձկնաբուծության ու որսորդության ծավալների արժեքները:

**Բուսաբուծության համախառն արտադրանքը** հաշվետու տարում ներառում է.

- ստացված հացահատիկի և հատիկազանդեղենի, տեխնիկական մշակաբույսերի (յուղատու մշակաբույսերի սերմեր, վուշ, կանեփ, շաքարի ճակնդեղ, ծխախոտ, մախորկա և այլն), կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, կերային մշակաբույսերի արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և բազմամյա տնկարկների տնկանյութի և այլնի արժեքը,
- բազմամյա տնկարկների հիմնման և մշակման արժեքը,
- բուսաբուծության արտադրանքի անավարտ արտադրության փոփոխության արժեքը (աշնանացանի, ցրտահերկի բարձրացման և այլ աշխատանքների ծախսերը, որոնք կատարվում են հաշվետու տարում՝ հաջորդ տարվա բերքի տակ):

**Անասնաբուծության համախառն արտադրանքը** հաշվետու տարում ներառում է.

- անասնի աճեցումից ստացված մթերքի (միս, կաթ, բուրդ, ձու և այլն) արժեքը,
- անասնի, թռչնի և այլ անասնատեսակների աճեցումից ստացված արժեքը (ծնի, հավելաճի և քաշաճի արժեքը), առանց իրացված մսի արժեքի,
- մեղվաբուծության արտադրանքի արժեքը և այլն:

**Անտառային տնտեսության** վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է ՀՀ բնապահպանության նախարարության Անտառային պետական կոմիտեից: Այն իր մեջ ներառում է հետևյալ ցուցանիշները.

- անտառաբուծություն, որը ներառում է անտառապատման և անտառվերականգնման, խնամքի և սանիտարական հատումների, սերմնային, տնկարանային տնտեսության գործունեության արտադրության ծավալները,
- փայտամթերում, որը ներառում է շինափայտի, վառելափայտի, երկրորդական օգտագործման կոճղերի, խեժերի, դաբաղային նյութերի, ամանորյա տոնածառների և հյուսած արտադրատեսակների արտադրության ծավալները:
- վայրի բույսերի և անտառային մթերքների մթերում, որը ներառում է հավաքված վայրի պտղի, սերմերի, բուսական հյութերի և հանուկների, մամուռի, քարաքոսի և դեղաբույսերի արտադրության ծավալները:
- անտառաբուծության և փայտամթերումների բնագավառում ծառայությունների մատուցում, որը ներառում է անտառաշինության և անտառի կառավարման մշակված ծրագրերի, սերմերի և տնկանյութի որակափոխման, անտառի ավիացիոն պաշտպանության, պահպանության, անտառմելիորատիվ, հակահրդեհային և այլ աշխատանքների (ծառայություններ) արտադրության ծավալները:

**Ձկնորսության և ձկնաբուծության ոլորտի** վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է առափնյա կամ ներքին քաղցրահամ ջրերում, բաց ծովում ապրող ձկների, խեցեմորթերի (խեցգետին, ծովախեցգետին, օմար, մանր ծովախեցգետին (կրեվետկա), լանգուստ) և կակդամորթերի, կրիաների, իժերի, ծովային ոգնիների, բնական մարգարտի, սպունգերի, ջրիմուռների և նմանատիպ այլ ծովամթերքի որս, ինչպես նաև ձկնաբուծարանների և ձկների կլիմայավարժեցմամբ ու ձկնամելիորատիվ աշխատանքներ իրականացնող, նորածին մանրաձկների աճեցմամբ, մանր ծովախեցգետինների, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից: Ձկնորսության և

ձկնաբուծության ոլորտում կատարված որսի վերաբերյալ տվյալներ է ՀՀ վիճակագրական կոմիտեին տրամադրում նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

### **Շինարարություն**

**Հիմնական միջոցները** կազմում են ՀՀ ազգային հարստության կարևորագույն մասը: Հիմնական միջոցներ են հանդիսանում շենքերը, շինությունները, մեքենաներն ու սարքավորանքները (բանվորական և ուժային մեքենաներն ու սարքավորանքները, չափիչ և կարգավորիչ փորձասարքերն ու հարմարանքները, լաբորատոր սարքավորանքները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները և հիմնական միջոցների այլ տեսակները:

Հիմնական միջոցների մեջ են ներառվում նաև պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցները, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները: Այդ միջոցների մեջ ներառվում են բնակելի շենքերը, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների (տնտեսական շենքեր, գյուղտեխնիկա) հիմնական միջոցները:

**Հիմնական միջոցների գործարկման** ցուցանիշի մեջ ներառվում են շինարարությունն ավարտված և շահագործման հանձնված կազմակերպությունների, շենքերի և շինությունների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, սարքավորանքների (մոնտաժվող և չմոնտաժվող, շինարարության նախահաշվի մեջ մտած և չմտած) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի որակի լավացման հետ կապված ծախսերը և հիմնական միջոցների արժեքների մեծացման հետ կապված այլ ծախսերը:

**Շինարարության** ծավալում ընդգրկվում են բոլոր ոլորտներում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, առևտուր և այլ) իրականացված շինմոնտաժային՝ նոր շինարարության, գործող շենքերի և շինությունների վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման, ամրացման, վերանորոգման և տարբեր տեսակի սարքավորանքների տեղադրման աշխատանքների արժեքները, ինչպես նաև սարքավորանքների, գործիքների, գույքի ձեռք բերման համար կատարված ծախսերը և այլ շինարարական աշխատանքները: Շինարարության ծավալն արտահայտվում է համապատասխան տարվա ընթացիկ ծախսերի գներով:

Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կազմված է բնակելի մակերեսից և օժանդակ տարածությունների մակերեսից: Բնակարանային և հյուրանոցային տիպի բնակելի շենքերի, ինչպես նաև բնակարաններ պարունակող ոչ բնակելի շենքերի բնակելի մակերեսի մեջ ընդգրկվում է բնակարանի ներսում գտնվող բնակելի սենյակների՝ ճաշասենյակների, ննջասենյակների, մանկական սենյակների և այլ բնակելի սենյակների մակերեսը: Հանրակացարանների բնակելի մակերեսի մեջ հաշվի է առնվում միայն ննջասենյակների և ցերեկային սենյակների մակերեսը: Բնակարանային և հյուրանոցային տիպի բնակելի շենքերի, ինչպես նաև ոչ բնակելի շենքերի օժանդակ տարածությունների թվին են պատկանում բնակարանի ներսում գտնվող խոհանոցը, միջանցքները, սանհանգույցները, լողասենյակները, հանդերձարանները, պահեստները, պահարանները: Հանրակացարաններում, բացի վերը նշվածներից, օժանդակ տարածու-

թյունների թվին են պատկանում նաև մշակութակենցադային նշանակության և բժշկական ծառայությունների տարածությունները: Օժանդակ տարածությունների մեջ են մտնում փակ պատշգամբները, լոջաները, երկարավուն պատշգամբները, եթե դրանք նախատեսված են նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշներով: Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի մեջ չեն մտնում նախասրահների, նախամուտքերի, աստիճանավանդակների, ընդհանուր միջանցքների մակերեսները, ինչպես նաև բնակելի շենքերին կից կառուցված ոչ բնակելի շենքերի մակերեսները:

### **Տրանսպորտ**

**Տրանսպորտը** ներառում է տրանսպորտային գործունեությունը՝ չվացուցակի համաձայն կամ չվացուցակից դուրս իրականացվող մարդատար և բեռնատար երկաթուղային, ցամաքային, ջրային, օդային փոխադրումները, խողովակաշարերով փոխադրումը տրանսպորտային գործունեության հետ կապված ծառայությունների մատուցումը՝ ուղևորների ու բեռների կուտակիչների (տերմինալների) և կայանատեղերի շահագործումը, բեռների մշակումը, պահումը և այլն: Այս բաժինը ներառում է նաև տրանսպորտային միջոցների և սարքավորանքի հանձնումը վարձակալության՝ վարորդով կամ օպերատորով, ինչպես նաև փոստային և սուրհանդակային ծառայությունները:

**Տրանսպորտն** ընդգրկում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակները:

**Ընդհանուր օգտագործման տրանսպորտն** իրականացնում է տնտեսության ճյուղերի և բնակչության բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները:

**Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն** իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները (ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ ավտոտրանսպորտային միջոցներով, երկաթուղային տրանսպորտի համար՝ ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներով), ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներսնտեսական և ծառայողական):

Ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշներն են **բեռների փոխադրումների ծավալը (տոննա)**, **բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր)**, **ուղևորների փոխադրումների ծավալը (ուղևոր)** և **ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր)**:

**Բեռնափոխադրումների ծավալում (փոխադրված բեռներ)** ներառվում է փոխադրված բեռների փաստացի քանակը, հաշվի առած տարայի կամ բեռնարկղի (կոնտեյների) քաշը:

**Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրերով)** հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

**Ուղևորափոխադրումների ծավալում (փոխադրված ուղևորներ)** ներառվում է տրանսպորտային միջոցներով փաստացի փոխադրված ուղևորների թվաքանակը (ներառյալ անվճար երթուղեկության իրավունքներից օգտվող ուղևորները):

**Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետրերով)** հաշվարկվում է փոխադրված ուղևորների թվաքանակի և մեկ ուղևորի փոխադրման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:

Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրման և ուղևորաշրջանառության ծավալները որոշվում են ըստ հաղորդակցության առանձին տեսակների՝ ներքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական:

**Փոստային և սուրհանդակային գործունեությունը** ներառում է տարբեր քաշի ծանրոցների, փաթեթների, նամակների ընդունումը, փոխադրումը, տեղ հասցումը: Ցուցանիշում ներառվում է փոստի ազգային օպերատորի և փոստային ու սուրհանդակային ծառայությունների մատուցող այլ կազմակերպությունների գործունեությունը:

## **Կապ**

**Հեռահաղորդակցության կապի գործունեությունը**՝ ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը:

**Հարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայությունները.**

- հեռախոսային ցանցի,
- հեռագրական կապի,
- ինտերնետ հասանելիության,
- մալուխային հեռուստատեսային համակարգերի:

**Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայությունները.**

- բջջային հեռախոսակապի,
- ռադիոալիքային (փեյջինգային) կապի,
- շառավղային գործունեության կապի,
- ինտերնետ հասանելիության:

**Արբանյակային կապի ծառայությունները** ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար արբանյակային կապն ապահովող միջոցների սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը, հեռուստաալիքներով ու հեռուստատեսային կայաններից և ցանցերից կամ ռադիոցանցներից ստացված ձայնատեսաձրագրերի, տեքստերի փոխանցումն անմիջական սպառողին, ինչպես նաև ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ արբանյակային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից:

**Հեռուստառադիոձրագրերի կազմում և հեռարձակում** հատվածը ներառում է հեռուստառադիոձրագրերի՝ նորությունների, ժամանցային ձրագրերի, բանավեճերի ու համանման այլ ձրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի հեռուստառադիոձրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև տվյալների փոխանցումը, սովորաբար, երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում:



## **Առևտուր և այլ ծառայություններ**

*Առևտրի շրջանառությունը* ներառում է մանրածախ առևտրի շրջանառությունը, մեծածախ առևտրի շրջանառությունը և ավտոմեքենաների առևտուրը: Առևտրի շրջանառության ցուցանիշը հաշվարկվում է առանց ավելացված արժեքի հարկի և անուղղակի հարկերի:

*Մանրածախ առևտրի շրջանառությունը* վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ:

Մանրածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ձևավորվում է ըստ առևտրի օբյեկտների՝ խանութների, կրպակների, առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերի), ինչպես նաև առևտրի իրականացման վայրերի՝ սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով իրականացված առևտրի շրջանառության հիման վրա:

*Մեծածախ* է համարվում առևտրի այն տեսակը, երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի համար այլ վաճառողներին, վերամշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթերով: Մեծածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ներառում է նաև արտահանման ծավալները (բացառությամբ արտադրողների կողմից անմիջական արտահանումը):

*Ավտոմեքենաների առևտուրը* ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

*Ծառայությունների ծավալն* արտացոլում է մատուցված տարբեր տեսակի ծառայությունների ծավալը և հաշվառվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից՝ հաշվեգրման սկզբունքով, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի: Ցուցանիշը չի ներառում նաև պետպատվերով իրականացված ծառայությունների ծավալը:

*Ծառայությունների ծավալի* ցուցանիշը ձևավորվում է կացության և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, զվարճությունների և հանգստի (ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների կազմակերպման, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեության, շահումով խաղերի կազմակերպման, սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման), կրթության (նախադպրոցական, տարրական, միջնակարգ, նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական, այլ կրթություն՝ մարմնամարզության, սպորտի, մշակույթի բնագավառում, հաշվապահական, օտար լեզուների, համակարգչային և այլ դասընթացներ), առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, անշարժ գույքի հետ կապված գործունեության (սեփական անշարժ գույքի առուվաճառքի, սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլն), տեղեկատվության և կապի (հրատարակչության, կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրության, երաժշտական և այլ ձայնագրությունների հրատարակչության, հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների), տրանսպոր-

տի՝ օդային, ցամաքային (ավտոմոբիլային, երկաթուղային, էլեկտրատրանսպորտ) առանց խո-  
դովակաշարայինի, փոստային և սուրհանդակային գործունեության, վարչարարական և օժան-  
դակ գործունեության (վարձույթի և լիզինգի, զբաղվածության հարցերին առնչվող գործունեու-  
թյան, զբոսաշրջային, անվտանգության ապահովման և հետաքննությունների, շենքերի սպա-  
սարկման և բնատեսարանի բարեկարգման և ձեռնարկատիրական գործունեության), մասնագի-  
տական, գիտական և տեխնիկական գործունեության (իրավաբանական և հաշվապահական  
գործունեության, գլխամասային գրասենյակների և կառավարման հարցերով խորհրդատվական  
գործունեության, ճարտարապետական և ճարտարագիտական, տեխնիկական փորձարկումնե-  
րի, գիտական հետազոտությունների և մշակումների, գովազդային և շուկայի իրավիճակի  
հետազոտության, անասնաբուժական գործունեության, այլ մասնագիտական, գիտական և տեխ-  
նիկական գործունեության), ֆինանսական և ապահովագրական գործունեության, սպասարկ-  
ման այլ ծառայությունների (համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային ար-  
տադրատեսակների նորոգման, անհատական՝ մանածագործական և մորթե ատադրատեսակ-  
ների լվացման և մաքրման, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների, թաղումների կազ-  
մակերպման, բաղնիքների և այլն) ծավալից:

**Գներ**

*Սպառողական գների ինդեքսը* Սպառողական գների ինդեքսն որոշում է կայուն զամբյուղի  
ապրանքների գների և ծառայությունների սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը  
ժամանակի ընթացքում և այդ արժեքի հարաբերակցության մեծությունը հաշվետու  
ժամանակահատվածում բազիսային ժամանակահատվածի համեմատ:

ՄԳԻ-ն բնութագրում է բնակչության կողմից ձեռք բերված ապրանքների և  
ծառայությունների գների և սակագների ընդհանուր մակարդակի փոփոխությունը տարեկան,  
եռամսյակային, ամսական պարբերականությամբ:

Ապրանքների սպառումն ու խմբավորումներն իրականացվում են ըստ Անհատական  
սպառում ըստ նպատակների 5 նիշ դասակարգչի (ԱՄԸՆԴ):

ՄԳԻ հաշվարկման համար ք.Երևանում և ՀՀ 10 մարզերում սահմանված մեթոդաբանու-  
թյամբ, կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում: Ըստ  
մարզերի, գների դիտարկումը կատարվում է հետևյալ բնակավայրերում.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Դիտարկվող քաղաքը</i>
Արագածոտն	Աշտարակ
Արարատ	Արտաշատ
Արմավիր	Վաղարշապատ
Գեղարքունիք	Գավառ
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց Ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Իջևան

Սահմանված է գների դիտարկման հետևյալ կարգը. ՀՀ ՍԳԻ-ի հաշվարկման համար գների դիտարկումներն իրականացվում են ամսական պարբերականությամբ, առևտրի և ծառայության կետեր 3 անգամյա այցելության միջոցով, հստակ պահպանելով այցելությունների 10-օրյա միջակայքը (յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին):

Ընդհանուր առմամբ, իրականացնելով ամսական երեքանգամյա դիտարկումներ, յուրաքանչյուր բազային օբյեկտ գնադիտարկողը տվյալ ամսվա ընթացքում այցելում է մեկ անգամ: Երկու այցելությունների միջև ընկած ժամանակահատվածը յուրաքանչյուր բազային օբյեկտի համար կազմում է մեկ ամիս:

Թարմ միրգ, բանջարեղեն, վառելիք (բենզին, դիզելային վառելիք) ապրանքախմբերում ընդգրկված ապրանք-ներկայացուցիչների գծով դիտարկումներն իրականացվում են ամսական 3 անգամյա պարբերականությամբ՝ 1-ին, 10-ին և 20-ին կամ դրանց մոտակա օրերին՝ յուրաքանչյուր դիտարկման ժամանակ այցելելով դրանց դիտարկման համար ընտրված բոլոր դիտարկման օբյեկտները:

ՍԳԻ-ի հաշվարկման ներկայում ընդգրկված են 450 ապրանք-ծառայություն (տարրական ագրեգատներ, որոնք ունեն համապատասխան տեսակարար կշիռ): Ամեն ապրանքի (ծառայության) համար ընտրվում է հստակ նկարագրերով 2-ից 3 ներկայացուցիչ: Յուրաքանչյուր ապրանքի (ծառայության) համար գների դիտարկման նպատակով ընտրվում է 3-ից 12 առևտրի ծառայության բազային կետ՝ հաշվի առնելով տվյալ մարզում դիտարկվող բնակավայրի բնակչության թվաքանակի, առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալների մասին ցուցանիշները:

ՍԳԻ-ի ապրանքների և ծառայությունների գամբյուղի կշիռների ձևավորման համար անհրաժեշտ ցուցանիշները ստացվում են առաջնահերթ՝ հիմնվելով ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների կենսապայմանների ինտեգրացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքում ստացված տնային տնտեսությունների կողմից իրականացված դրամային ծախսումների մասին տվյալների վրա:

Մարզերի կշիռները ձևավորվում են հետևյալ վիճակագրական ցուցանիշների հիման վրա՝ ապրանքաշրջանառության ծավալ, մատուցված վճարովի ծառայությունների ծավալ, բնակչության թվաքանակ:

Ընթացիկ ինդեքսի համար կշիռների ժամանակաշրջանը 2017 թվականն է: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում 2016թ. (հոկտեմբեր-դեկտեմբեր) և 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքները և մինչև 2017թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ապրանք-ծառայության գնային փոփոխությունները, կատարվել է սպառողական գամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռների վերահաշվարկ: Սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար որպես բազիսային ժամանակահատված ընդունվել է 2017 թվականի դեկտեմբեր ամիսը:

ՀՀ-ում ՄԳԻ-ն հաշվարկվում է տարբեր ժամանակահատվածների՝ հաշվետու ամիսը բազիսային ժամանակահատվածի՝ նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ ամսվա, նախորդ տարվա համապատասխան ամսվա, հաշվետու ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի (աճողական կարգով) նկատմամբ:

ՀՀ-ում ՄԳԻ-ը հաշվարկելու համար կիրառվում է Լասպեյրեսի բանաձևի հետևյալ տարբերակը.

$$I_{on} = \frac{\sum \frac{P_{nj}}{P_{n-1,j}} \times P_{n-1,j} \times Q_{oj}}{\sum P_{oj} \times Q_{oj}} \times 100,$$

որտեղ՝  $P_{n-1,j} \times Q_{oj} = P_{oj} \times Q_{oj} \times \frac{P_{1j}}{P_{0j}} \times \frac{P_{2j}}{P_{1j}} \times \dots \times \frac{P_{n-1,j}}{P_{n-2,j}}$

***Ion** – n ժամանակաշրջանի ինդեքսն է համեմատած օ բազիսի հետ,*

***Poj** – j ապրանքի գինն է օ բազիսային ժամանակաշրջանում,*

***Pnj** – j ապրանքի գինն է n հաշվետու ժամանակաշրջանում,*

***Qoj** – j ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:*

**ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը** բնութագրում է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների փոփոխությունը ժամանակի ընթացքում՝ առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի հաշվարկման: Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի (ՄԱԳԻ) հաշվարկման կարգի մեթոդաբանությունը նպատակաուղղված է արդյունաբերության ոլորտի<sup>1</sup> կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների մակարդակի և փոփոխության վիճակագրական դիտարկման ապահովմանը:

Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների տվյալների հիման վրա: Հետազոտման համար ընտրվում են տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ) (խմբագրություն 2) հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման բաժիններին համապատասխան գործունեություն ծավալող առավել բնորոշ կազակերպությունները:

Արդյունաբերական կազմակերպությունների ընտրանքն իրականացվում է կշիռների նորացման (թարմացման) հետ միաժամանակ՝ 3-5 տարին մեկ անգամ: ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկն իրականացվում է «ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման կարգ»-ին (հաստատված ՀՀ ՎՊԽ 2009թ. դեկտեմբերի 23-ի թիվ 49-Ա որոշմամբ) համապատասխան:

<sup>1</sup> Ներառում է ՏԳՏՀԴ-ի (Խմբ. 2) B,C,D,E բաժինները:

Ինդեքսների հաշվարկն իրականացվում է Լասպեյրեսի բանաձևով՝ ամսական պարբերականությամբ, համաձայն Արտադրանքի դասակարգչի ըստ գործունեության տեսակների (ԱՂԳՏ)՝ արտադրանք և ըստ ՏԳՏՀԴ-ի՝ դաս, խումբ, հատված, ենթաբաժին, բաժին և ընդամենը՝ ՀՀ ագրեգացման մակարդակների:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը հաշվարկվում է հետևյալ կտրվածքներով. Յուրաքանչյուր ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ, նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ընթացիկ ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական կարգով), եռամսյակային ինդեքսներ:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսն** արտահայտում է գյուղատնտեսական մթերք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված մթերքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Այն հաշվարկվում է ՀՀ-ում 7 440 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 59 անվանում գյուղմթերքի գների ագրեգացման միջոցով՝ ըստ բուսաբուծական և անասնաբուծական մթերքի և ըստ ՀՀ մարզերի: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին ապրանքատեսակների ինդեքսների կշռված մեծություն, ընդգրկված միատեսակ ապրանքախմբում:

Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը:

**Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը** բնութագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունները շարժը հաշվետու ժամանակահատվածում՝ բազիսայինի համեմատ: Հաշվարկվում է 7 440 գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռք բերված 78 անվանում արտադրության միջոցների գնման գների հետազոտման տվյալների հիման վրա:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը** բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Ագրեգացվում է հանրապետությունում գործող 4 տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, մայրուղային խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների հաշվարկված ինդեքսների միջոցով, որը որոշում է տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի գծով (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային մայրուղային խողովակաշարային) գրանցվում է ծառայություն-ներկայացուցչի բեռնափոխադրման սակագինը, ինչով պայմանավորվում է տրանսպորտի կոնկրետ տեսակով առավել հաճախ փոխադրվող մեկ միավոր բեռի (տոննա, խորանարդ մետր) առաքումը փաստացի տարածության վրա (որոշակի երթուղով): Որպես կշռման բազա ընդունվում են որոշակի բազիսային ժամանակահատվածում (հիմնականում՝ նախորդ տարում) բեռների տեղափոխման ծառայությունների դիմաց տրանսպորտային կազմակերպությունների կողմից ներկայացված եկամուտների մասին տվյալները: Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկներն իրակա-

նացվում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին (ՏԳՏՀԴ) համապատասխան:

**Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը** բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը: Ստացված տվյալների գաղտնիությունն ապահովելու համար մշակվում է արտաքին առևտրի ներմուծման (արտահանման) գների ինդեքսների հետագա հաշվարկի համար հատուկ տվյալների բազա: Հաշվարկներին մասնակցող ընտրված ապրանքներին են վերաբերվում այն բոլոր միատարր ապրանքատեսակները, որոնք ծածկագրված են ըստ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳԱԱ) դասակարգչի 10-նիշ ծածկագրերի,

- դասակարգված են՝
  - ըստ ապրանքային ենթախմբերի,
  - ըստ ապրանքային խմբերի,
  - ըստ ապրանքային բաժինների,
- ունեն ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալներ,
- պարունակում են տեղեկատվություն տվյալ ապրանքն արտահանող կամ ներմուծող երկրի մասին:

*Արտաքին առևտրի գների ինդեքսների հաշվարկը տարվում է 4 ուղղություններով՝*

- «ըստ բոլոր երկրների»,
- «ըստ ԱՊՀ երկրների»,
- «ըստ այլ երկրների»,
- «ըստ Եվրամիության երկրների»:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Դա թույլ է տալիս համադրել ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ: Միավորի արժեքը (գինը) կշռվում է բազիսային ժամանակաշրջանի առևտրային հոսքերով, որոնք կարող են տարեց տարի զգալի տատանվել, կորցնել արդիականությունը և նպաստել գների ինդեքսների արհեստական աճին (նվազմանը): Ուստի, այնպիսի բնագավառում ինչպիսին արտաքին առևտուրն է, նպատակահարմար է բազիսային ժամանակաշրջանն ընդունել նախորդ տարին:

ՀՀ-ում արտաքին առևտրի գների ինդեքսը հաշվարկվում է ամսական կտրվածքով:

«Ըստ ԱՊՀ երկրների», «ըստ այլ երկրների» և «ըստ Եվրամիության երկրներին» ուղղություններում ինչպես ընթացիկ ամսվա, այնպես էլ բազիսային տարվա համար հաշվարկվում է առանձին ապրանքատեսակների ներմուծման (արտահանման) միջին արժեքը (գինը),

$$\bar{P}_i = \frac{V_i}{Q_i}$$

որտեղ՝

$P_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի միջին արժեքն է,

$V_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,

$Q_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի քանակն է:

Օգտագործելով տոկոսային փոփոխությունների փոխկապակցման (ագրեգացման) եղանակը, ապրանքային ենթախմբերի ինդեքսների հիման վրա՝ հաշվարկվում են ապրանքային խմբերի, բաժինների միջին արժեքների ինդեքսներ, ինչպես նաև ներմուծման և արտահանման գների ամփոփ ինդեքսներ «ըստ ԱՊՀ երկրների», «ըստ այլ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» հետևյալ բանաձևով՝

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{P_{it}}{P_{io}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}}$$

որտեղ՝  $I_E$  - յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի միջին արժեքի ինդեքսն է,

$P_{it}$  -  $i$ -րդ ապրանքի միջին արժեքն (գինն) է ընթացիկ ամսում,

$P_{io}$  -  $i$ -րդ ապրանքի բազիսային միջին արժեքն (գինն) է:

$W_{io}$  -  $i$ -րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Հաշվարկված արտաքին առևտրի միջին արժեքի ինդեքսների շարքը կարող է լինել խիստ անկանոն ի հաշիվ առանձին ապրանքատեսակների գների կտրուկ տատանումների: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Ինդեքսի սահմանային արժեքները հաստատվում են այնպես, որ ապահովեն գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով անհամադրելի տվյալները և հնարավոր սխալները: Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով): Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այն մշակելիս հաշվի են առնվել ԱՄՀ կողմից արված առաջարկությունները, միջազգային փորձը և համարվում է վերոհիշյալի կողմից առաջարկված նախապատվելի տարբերակներից մեկը:

## Աշխատանք

### • Աշխատանքի վարձատրություն

Վարձու աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշի աղբյուրը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան է:

ՀՀ ՊԵԿ վարչական ռեգիստրի ներդրման արդյունքում ապահովվել է ամսական կտրվածքով վիճակագրական միավորների ամբողջական ընդգրկվածություն՝ ներառելով **մեկ և ավելի վարձու աշխատող** ունեցող **բոլոր կազմակերպություններին**՝ կազմակերպաիրավական ձևից անկախ:

**Միջին ամսական անվանական աշխատավարձը** հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների ընդհանուր գումարի (ինչպես դրամական,

այնպես էլ բնահրային տեսքով) հարաբերությամբ աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին ամսական թվաքանակին:

**Իրական աշխատավարձը** բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում անվանական աշխատավարձի գնողունակությունը, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Ցուցանիշը հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ՝ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

**Իրական աշխատավարձի ինդեքսը** հաշվարկվում է միննույն ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի ինդեքսի (աճի տեմպի) և սպառողական գների ինդեքսի հարաբերությամբ:

- **Աշխատանքի շուկա**

Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում (S/S) իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունն է:

2018թ. հունվարից վերանայվել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ համաձայն **Աշխատանքի վիճակագրիների միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի առանցքային դրույթների:**

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում.

- **Ընդլայնվել է «աշխատանքային գործունեություն»** հասկացության շրջանակը, որի նպատակն է ճանաչել և չափելի դարձնել աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ վճարվող և չվճարվող աշխատանքների: **Աշխատանքային գործունեության ձևերի չափման սույն մեթոդաբանության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդը ՄԻԱՄԱՄԱՆԱԿ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում:**

- **Ընդլայնվել է «աշխատուժի թերօգտագործում» (labour underutilization)** հասկացության շրջանակը՝ բնութագրելով ոչ միայն գործազուրկ բնակչության, այլ նաև 15-75 տարեկան բնակչության մյուս խմբերի՝ զբաղվածների և աշխատուժից դուրս բնակչության, չբավարարված առաջարկը:

Աշխատուժի թերօգտագործումը (**ԱԹ**) բնութագրող ցուցանիշներն են.

1. **ԱԹ1.** Գործազրկության մակարդակ.
2. **ԱԹ2.** Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության (time-related underemployment) և գործազրկության զուգորդված մակարդակ.
3. **ԱԹ3.** Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.
4. **ԱԹ4.** Աշխատուժի թերօգտագործման ազդեցությունը ցուցանիշ:

- **Նախկին** սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում իրենց տնտեսությունում զբաղվել են **ապրանքների արտադրությամբ սեփական վերջնական սպառման համար**, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ:

- **Վերանայվել են** որոշ ցուցանիշների անվանումները:

1. **«Տնտեսապես ակտիվ բնակչություն»** եզրույթը վերանվանվել է **«աշխատուժ»** (բնօրինակը՝ labour force): Համապատասխանաբար, **«Տնտեսական ակտիվության մակարդակ»** եզրույթը վերանվանվել է **«Աշխատուժի մասնակցության մակարդակ»** (labour force participation rate):



2. «Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն» եզրույթը վերանվանվել է «աշխատուժից դուրս բնակչություն» (population out of labour force):

**Աշխատանքային ռեսուրսները** 15-75 տարեկան աշխատուժի (գրադված և գործազուրկ) և աշխատուժից դուրս (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) բնակչության հանրագումարն են:

**Աշխատուժից դուրս բնակչության** մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում **չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել՝** չեն եղել գրադված կամ գործազուրկ, մասնավորապես.

- առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողները և ուսանողները.
- տնային տնտեսությամբ գրադվածները.
- երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները.
- անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում (կենսաթոշակառուներ (տարիքային, արտոնյալ պայմաններով, հաշմանդամության), սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ, պարտադիր ժամկետային զինծառայողներ և այլն):

**Աշխատուժի** մեջ ներառվում են գրադվածները և գործազուրկները, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

**Աշխատուժի մասնակցության մակարդակը** հաշվարկվում է աշխատուժի թվաքանակի տոկոսային հարաբերությամբ 15-75 տարեկան բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

**Աշխատանքային գործունեությունը (աշխատանքը)** անձի կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից կամ գործունեության օրինականությունից:

Աշխատանքի հինգ ձևերն են.

1. Զբաղվածություն՝ այլոց համար կատարվող եկամուտ հետապնդող աշխատանք.
2. **Սեփական սպառման համար** ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում.

2ա. Սեփական սպառման համար ապրանքների արտադրություն (օրինակ՝ հողագործական, անասնապահական ապրանքների արտադրություն՝ անմիջապես սպառման կամ պահեստավորման համար, սեփական տան կառուցում, կապիտալ նորոգում, կահույքի պատրաստում, հագուստի կարում, գործում, վառելափայտի հավաքում, պահեստավորում և այլն).

2ա1. Մնողամթերքի բնաիրային արտադրություն (օրինակ՝ հողագործության, բուսաբուծության, անասնապահական, անասնաբուծական ապրանքների արտադրություն, ձկնորսություն, հավաքչություն և այլն).

2բ. Սեփական սպառման համար ծառայությունների տրամադրում (օրինակ՝ չվճարվող տնային գործեր, ընտանիքի ծեր / հիվանդ / մանկահասակ անդամի խնամք և այլն).

3. Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա՝ այլոց համար կատարվող չվճարվող աշխատանք՝ աշխատատանքային փորձ կամ հմտություն ձեռք բերելու նպատակով.

4. Կամավոր աշխատանք՝ այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանք.

5. Այլ աշխատանք՝ այլոց համար կատարվող (օրինակ՝ աշխատանք կալանավայրում), որի գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման գործընթացում է:

**Զբաղված** են համարվում անձինք, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում **եկամուտ / աշխատավարձ ստանալու նպատակով գոնե մեկ ժամ** զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այլոց սպառման համար**»: Զբաղվածների թվաքանակում ներառվում են նրանք, ովքեր.

- ունեցել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական,
- ժամանակավորապես տարբեր պատճառներով բացակայել են աշխատանքից՝ հիվանդության, հիվանդի խնամքի, ամենամյա արձակուրդի կամ հանգստյան օրերի, աշխատավայրից դուրս ուսուցման, գործատուի նախաձեռնությամբ հարկադիր արձակուրդում (չվճարվող կամ մասնակիորեն վճարվող) գտնվելու, գործադուլի և այլ պատճառներով.
- առանց վարձատրության աշխատել են տնային տնտեսությանը կամ ազգականին (բարեկամին) պատկանող շուկայական ուղղվածությամբ ընտանեկան կազմակերպությունում՝ օգնելու, օժանդակելու նպատակով:

Ըստ իրենց կարգավիճակի զբաղվածները դասակարգվում են վարձու և ոչ վարձու աշխատողների:

**Վարձու աշխատող են** համարվում անձինք, ովքեր աշխատում են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձ:

**Ոչ վարձու** աշխատող են համարվում անձինք, ովքեր ինքնուրույնաբար են իրենց ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ (գործատու, ինքնազբաղված, ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամ, արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամ):

**Զբաղվածության մակարդակը** հաշվարկվում է զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ համապատասխան տարիքային խմբի առկա բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

**Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղված** են համարվում զբաղված անձինք, ովքեր միաժամանակ բավարարել են հետևյալ պայմաններին.

- Հետազոտվող շաբաթում վճարման պայմանով ցանկացել են և պատրաստ են եղել աշխատել լրացուցիչ ժամեր՝ իրենց ընթացիկ աշխատանքում և / կամ՝ լրացուցիչ այլ աշխատանք(ներ)ում.
- Հետազոտվող շաբաթում աշխատած ժամերը բոլոր աշխատանքներում եղել է սովորաբար աշխատած ժամերից պակաս: Ընդ որում, աշխատաժամանակի սահմանված շեմ ընդունվում է **սովորաբար աշխատած ժամերի շաբաթական մեղիան** միավորը՝ 36 ժամ:

**Թերզբաղվածության մակարդակը** հաշվարկվում է թերզբաղվածների և զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ:

**Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության** վերլուծությունը խարսխված է աշխատատեղերի քանակի (ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ (երկրորդ)) և ոչ թե զբաղված անձանց թվա-

քանակի վրա: Հետևաբար, ընդամենը զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կունենա ավելի մեծ քանակական արտահայտություն, քան զբաղվածների թվաքանակը:

**Ոչ ֆորմալ զբաղվածությունը** դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է, անկախ այն հանգամանքից եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում:

Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են. (ա) գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները (այդ թվում՝ տնային տնտեսությունում վճարովի աշխատողները), (բ) չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները և ինքնազբաղվածները, (գ) առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, (դ) չգրանցված արտադրական կոոպերատիվների անդամները և (ե) բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրողները (եթե համարվում են զբաղված): Ոչ ֆորմալ զբաղվածներ են համարվել նաև տնային տնտեսություններում բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք և (կամ) ծառայություն արտադրող ինքնազբաղվածները, առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, եթե իրենց արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ:

**Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը** ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների թվաքանակի (ոչ ֆորմալ աշխատատեղերի) տեսակարար կշիռն է ընդամենը զբաղվածության (ընդամենը աշխատատեղերի) մեջ կամ ոչ ֆորմալ աշխատատեղերի և ընդամենը աշխատատեղերի տոկոսային հարաբերությունն է:

#### **Գործազուրկներ**

• *Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկվող ստանդարտ սահմանման համաձայն գործազուրկ են* համարվում անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ երեք պայմաններին.

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք.

- ակտիվորեն փնտրել են աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել են զբաղվածության պետական և (կամ) մասնավոր գործակալություն, աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով՝ հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում.

- պատրաստ են եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա 2 շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Գործազուրկ են համարվում նաև անձինք, ովքեր հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում չեն ունեցել և չեն փնտրել աշխատանք, որովհետև արդեն գտել են և կսկսեն աշխատել առաջիկա 2 շաբաթվա ընթացքում:

**Գործազրկության մակարդակը** հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ աշխատուժի թվաքանակին:

• **Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկ** են համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած՝ աշխատանք փնտրող և «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձինք, ովքեր աշխատանք գտնելու նպատակով հաշվառված են զբաղվածության պե-

տական գործակալությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

**Գործազրկության (աշխատանք փնտրելու) միջին տևողությունն** այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրել է աշխատանք և հաշվարկվում է որպես կշռված միջին մեծություն գործազուրկների դիտարկվող կազմի համար:

**Աշխատանք փնտրող** են համարվում, ըստ ՀՀ գործող օրենսդրության, 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական գործակալություն:

**Գործատուի հայտարարած աշխատուժի պահանջարկը** թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) քանակն է, որի վերաբերյալ գործատուն հայտնում է զբաղվածության պետական գործակալությանը:

**Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը** հաշվարկվում է զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակի և գործատուների կողմից նույն գործակալությանը հայտնած թափուր աշխատատեղերի քանակի հարաբերությամբ:

### **Ֆինանսներ և դրամաշրջանառություն**

**ՀՀ համախմբված բյուջեն** կազմում են պետական բյուջեն և համայնքների բյուջեները, որի մուտքերն օրենքով պետական և համայնքների բյուջեներին ամրագրված աղբյուրներից ձևավորվող (ձևավորված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով մուտքերի), իսկ ելքերը օրենքով սահմանված ուղղություններով ծախսվող (ծախսված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով ելքերի) համապատասխան հանրագումարներն են:

**ՀՀ բյուջետային համակարգը** հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝

ա) առաջին մակարդակ՝ պետական բյուջե.

բ) երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ:

**Պետական և համայնքի բյուջեները** պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

**Բյուջետային եկամուտներն** անվերադարձ կարգով օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:

**Բյուջետային ծախսերը** պետության և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղված դրամական միջոցներն են:

**Բյուջետային մուտքերը** ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, ոչ ֆինանսական ակտիվների

օտարումից, տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաև փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցները:

**Բյուջետային ելքերը** ներառում են բյուջետային ծախսերը (ընթացիկ և կապիտալ ծախսեր), ինչպես նաև բյուջետային վարկերի ու փոխատվությունների տրամադրումը և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

**Բյուջետային հասկացումները** բյուջեն հաստատող իրավական ակտով բյուջետային միջոցներ ստացողի գծով նախատեսված բյուջետային միջոցներն են:

**Կապիտալ ծախսերը** (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը) ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պետական ռազմավարական կամ համայնքային նշանակության պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը:

**Ընթացիկ ծախսերը** ներառում են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

**Բյուջեների պակասուրդը (դեֆիցիտը) և հավելուրդը.**

- Բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեների հավելուրդը:
- Բյուջեների եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեների դեֆիցիտը (պակասուրդը):

**Պետական բյուջեի պակասուրդը** ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող փոխառու միջոցների, պետական բյուջեից տրամադրված փոխառու միջոցների վերադարձից ստացվող զուտ միջոցների, ինչպես նաև այդ բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են՝**

- ա) հարկային եկամուտները.
- բ) պետական տուրքերը.
- գ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները.
- դ) պաշտոնական դրամաշնորհները.
- ե) այլ եկամուտներ:

**Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն են՝**

ա) պետությանը պատկանող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդերի) օտարումից մուտքերը (այդ թվում՝ լուծարված պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց՝ լուծարումից հետո մնացած գույքի օտարումից պետական մասնակցության չափին համապատասխան մուտքերը).

բ) բարձրարժեք ակտիվների օտարումից մուտքերը.

գ) պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը.

դ) պետական սեփականություն համարվող չարտադրված ակտիվների՝ հողի և ոչ նյութական չարտադրված ակտիվների օտարումից մուտքերը:

**Փողի բազան** ներառում է ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ՀՀ ԿԲ-ում ոչ բանկային կազմակերպությունների ավանդները (բացառությամբ կառավարության ավանդների): Փողի բազան հավասար է նաև ՀՀ ԿԲ-ի զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների հանրագումարին:

**Փողի զանգվածը** ներառում է շրջանառությունում կանխիկ դրամը և ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

**Ցլախանջ ավանդները** բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս հանվող միջոցներն են:

**Ժամկետային ավանդները** բանկերում որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:

**Վարկային ներդրումները** բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գծով մնացորդներն են: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետ (տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով) և երկարաժամկետ (մեկ տարուց ավել ժամկետով):

## **Արտաքին առևտուր**

**Արտաքին և փոխադարձ առևտրի վերաբերյալ (արտաքին առևտրի շրջանառություն, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ)** ցուցանիշների հաշվարկման համար հիմք են հանդիսացել բեռնամաքային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի և «Ապրանքների փոխադրման հաշվառման ձև»-ի տվյալները՝ ստացված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից, ինչպես նաև բնական գազի արտահանման ու ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման ու ներմուծման տվյալները՝ ստացված ՀՀ էներգետիկայի ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից և էներգետիկ կազմակերպություններից:

**Արտահանում:** Ապրանքների արտահանումն այլ երկրների տնտեսական տարածքներ ազատ շրջանառության համար երկրի սահմանով դուրս բերված ապրանքներն են, որոնք նվազեցնում են երկրի նյութական ռեսուրսների պաշարները: Արտահանման ծավալում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկված են ՖՕԲ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման:

**Ներմուծում:** Ապրանքների ներմուծումն երկրի տնտեսական տարածք ազատ շրջանառության համար ներս բերված ապրանքներն են, որոնք ավելացնում են երկրի նյութական ռեսուրսների պաշարները: Ներմուծման ծավալում ընդգրկված են արտասահմանյան ապրանքները, որոնք ներմուծվել են հանրապետություն սպառման և վերաարտահանման համար: Ներմուծված ապրանքների արժեքները հաշվարկված են ՄԻՖ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման, ներառյալ ապահովագրության և տրանսպորտային փոխադրության ծախսերը:

**Արտաքին առևտրի շրջանառություն:** Արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է:

**Արտաքին առևտրի հաշվեկշիռ:** Արտահանման (ՖՕԲ) և ներմուծման (ՄԻՖ) ծավալների տարբերությունն է:

**Կիրառվող համակարգ:** Արտաքին առևտրի վիճակագրության վարման համար կիրառվում է արտաքին առևտրի ընդհանուր համակարգ, երբ երկրի վիճակագրական տարածքը համընկնում է տնտեսական տարածքին:

**Գործընկեր երկիր:** Գործընկեր երկրի բնորոշման համար արտահանման ժամանակ կիրառվում է ապրանքի վերջին հայտնի նշանակման երկրի, իսկ ներմուծման ժամանակ՝ ապրանքի ծագման երկրի և ապրանքն առաքող երկրի հատկանիշը:

**Վճարային հաշվեկշիռ**

**ՀՀ վճարային հաշվեկշիռը** վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ՀՀ ռեզիդենտների<sup>1</sup> և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, սկզբնական եկամուտների, երկրորդային եկամուտների, ինչպես նաև ֆինանսական պահանջների և պարտավորությունների տեսքով:

**ՀՀ վճարային հաշվեկշիռը կազմված է 3 հիմնական հաշիվներից՝** ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ և ֆինանսական հաշիվ: Ընթացիկ հաշիվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների հետ կատարված գործառնությունները, կապիտալ հաշիվում՝ ոչ ֆինանսական ակտիվների և կապիտալ տրանսֆերտների, իսկ ֆինանսական հաշիվում՝ ձեռքբերված և դուրս գրված գուտ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ գործառնությունները:

Մեթոդաբանական առումով, ընթացիկ հաշվի և կապիտալ հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, որը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել սխալների և բացթողումների հոդված:

**Ֆինանսական հաշիվը** կազմված է 5 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից, ֆինանսական ածանցյալներից և պահուստային ակտիվներից: Վճարային հաշվեկշռում օտարերկրյա ներդրումները բերված են գուտ հիմքով, այսինքն օտարերկրյա ներդրումների հոսքեր հանած վճարումներ (ուղղակի ներդրումների դեպքում՝ նաև ներֆիրմային շարժ): Վճարային հաշվեկշռում արտացոլված օտարերկրյա ներդրումները ներառում են ինչպես իրական հատվածում կատարված ներդրումները, այնպես էլ բանկային (ներառյալ՝ ՀՀ ԿԲ) և պետական կառավարման համակարգերով իրականացված ներդրումները:

**Օտարերկրյա ներդրում** է համարվում գույքի ցանկացած տեսակ (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (ոչ նյութական ակտիվներ), որն օտարերկրյա ներդրողի

<sup>1</sup>Ըստ ԱՄՆ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, ՀՀ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, իրավաբանական անձը կամ ՀՀ տարածքում գործող որևէ տնտեսավարող սուբյեկտ, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը (ֆիզիկական անձանց համար՝ կենսական շահերի կենտրոնը) հանդիսանում է ՀՀ-ն:

կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով: Օտարերկրյա ներդրումները ֆինանսական ներդրումներ են (ֆինանսական միջոցների հոսքեր) և ըստ տեսակի լինում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումների տեսքով:

**Ուղղակի ներդրում** կատարվում է օտարերկրյա ուղղակի ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով իրավաբանական անձի գործունեության վրա կայուն, տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող (ինվեստոր) է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպություն, որին պատկանում է ՀՀ ռեզիդենտ միավորի բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10%-ը:

**Ուղղակի ներդրումները լինում են** կանոնադրական և էմիսիոն կապիտալի, ուղղակի ներդրողի մասնաբաժնի կազմակերպության սեփական կապիտալի այլ տարրերի և պարտքային գործիքների տեսքով:

**Պորտֆելային ներդրումն** օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումն է, որը թույլ է տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ որոշակի շահույթ, որը կարգավորվում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի արժեթղթերի՝ գլխավորապես բաժնետոմսերի (բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող) և պարտքի արժեթղթերի տեսքով:

**Այլ ներդրումը** ներդրումների այն մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են վարկերի և փոխառությունների (բացի օտարերկրյա ներդրումով կազմակերպության ստացածն իր անմիջական ներդրող կազմակերպությունից, որն ուղղակի ներդրում է), ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարների, ստացված և տրված կանխավճարների տեսքով:

Օտարերկրյա ներդրումների վիճակագրությունն իրականացվում է հաշվետու ժամանակահատվածում կատարված զուտ հոսքերի, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ համախառն հոսքերի, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ մաքուր պաշարների տեսքով:

**Համախառն հոսքերին** ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունների):

**Մաքուր պաշարներն** ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին ինչպես գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը, այնպես էլ պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունները՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները:



### **Միջազգային ներդրումային դիրք**

*ՀՀ միջազգային ներդրումային դիրքը (ՀՀ ՄՆԴ)* վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվության մեջ արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների շնորհիվ:

*ՀՀ ՄՆԴ-ն* սերտորեն կապված է ՀՀ վճարային հաշվեկշռի հետ: ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում գրանցվում են բոլոր գործառնությունները, որոնք կապված են արտաքին ակտիվների և պարտավորությունների հետ: Բնականաբար, այդ գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՀՀ ՄՆԴ-ում արտացոլված արտաքին ակտիվների ու պարտավորությունների պաշարների վրա: Միաժամանակ, կան նաև այլ գործոններ (գների, փոխարժեքի փոփոխություններ), որոնք ժամանակի ընթացքում հանգեցնում են ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխության: Այդ փոփոխությունները նույնպես արտացոլվում են ՀՀ ՄՆԴ-ում:

*ՀՀ ՄՆԴ-ն* արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները, իսկ ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ այդ ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները (հոսքերը կոնկրետ ժամանակահատվածում):

### **Արտաքին պարտք**

*Համախառն արտաքին պարտքը* ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

Արտաքին պարտքը, որպես կանոն, առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի մեկ կառուցվածքային միավորը /դեբիտորը/ պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի /կրեդիտորի/ հանդեպ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների, կամ էլ վճարել տոկոսներն առանց հիմնական գումարը վերադարձնելու:

Արտաքին պարտքի գործիքների թվին են դասվում պարտքի գործիքները, վարկերը, առևտրային վարկերը, կանխիկ դրամական միջոցները և ավանդները և այլ պարտքային պարտավորությունները:

Պարտքի գործիքներ չեն համարվում ֆինանսական գործիքների ֆինանսական ածանցյալները, կապիտալի մասնակցության արժեթղթերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող բաժնետիրական կապիտալը և վերաներդրված շահույթը (եկամուտը):

Արտաքին պարտքը հաշվարկվում է ըստ տնտեսության հատվածների, որոնք համաձայն արտաքին պարտքի մեթոդաբանության դասակարգվում են (1) պետական կառավարման մարմինների, (2) կենտրոնական բանկի, (3) ավանդային կազմակերպությունների, բացի ԿԲ-ից, (4)

այլ հատվածների (տնտեսության տարբեր հատվածների կազմակերպությունների կողմից ստացված ուղղակի ներդրումները բերվում են առանձին՝ 5-րդ բաժնով, առանց տնտեսության հատվածների բաժանման): Ընդ որում, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ երաշխիքներով մասնավոր հատվածի կազմակերպությունների ստացված վարկերն ըստ արտաքին պարտքի մեթոդաբանության ներառված են տնտեսության «այլ հատվածների» պարտքի ցուցանիշում:

Արտաքին պարտքի ցուցանիշը ներառում է ոչ միայն հիմնական գումարը, այլ նաև ժամանակահատվածի վերջի դրությամբ հաշվարկված, բայց դեռևս չվճարված տոկոսավճարները:

### **Մարդահամար և ժողովրդագրություն**

Յուրաքանչյուր վարչական միավորի **մշտական բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր բացակա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

**Ժամանակավոր բացակա** բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են տվյալ բնակավայրում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), մշտապես (սովորաբար) բնակվող, սակայն մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, տվյալ բնակավայրի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս՝ 1 տարուց պակաս ժամկետով բացակայող անձանց թվաքանակի ցուցանիշները (տես՝ «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի ուղեցույցներ» մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2006, գլուխ III «Հաշվառման ենթակա», կետ 167 «Ժամանակավոր բացակայողներ», էջ 56 (ռուսերեն տարբերակ), էջ 37 (անգլերեն տարբերակ)):

**Բնակչության բնական շարժը**՝ ծնվածների և մահացածների համակցության վերաբերյալ ընդհանրացված ցուցանիշների անվանումն է, որոնցով ձևավորվում է բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխությունը: Բնակչության բնական շարժի ցուցանիշներին են վերագրվում նաև ամուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնց հաշվարկները թեև իրականացվում են նույն եղանակով, սակայն դրանք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ուղղակի ազդեցություն չեն ունենում:

**Ծնունդների, մահերի, ամուսնությունների, ամուսնալուծությունների** վերաբերյալ ամենամյա տեղեկությունները ստացվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային մարմինների կողմից կազմված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության վերաբերյալ ակտերում գրանցված տեղեկությունների հիման վրա: Ծնվածների թվաքանակի մեջ ներառված են միայն կենդանի ծնված երեխաները: Ընդ որում, 2005թ. հոկտեմբերի 16-ից կիրառության մեջ են դրվել «Կենդանածնության, մեռելածնության և պերինատալ շրջանի» ԱՀԿ սահմանումները՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայմանը համապատասխան (ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 16-ի թիվ 949-Ն որոշում):

**Կենդանածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումն անկախ հղիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ

ցուցաբերում է կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և (կամ) անջատված է ընկերքը: Այսպիսի ծննդի յուրաքանչյուր արգասիք համարվում է կենդանածին: ՔԿԱԳ տարածքային մարմիններում գրանցման են ենթակա 500 գ և ավելի քաշով կենդանածնության բոլոր դեպքերը:

**Մեռելածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրս բերումը, որից հետո պտուղը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են սրտի խփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները:

ՔԿԱԳ մարմիններում գրանցվում և պերինատալ մահացության ցուցանիշում ներառվում են 500 գ և ավելի քաշով (22 շաբաթ և ավելի հղիության ժամկետով) մեռելածնության դեպքերը:

**Պերինատալ (շուրջծննդյան) շրջանը** սկսվում է պտղի ներարգանդային կյանքի 22 լրացած շաբաթից (154 օրից), երբ ծննդյան քաշը նորմալում 500 գրամ է և ավարտվում է ծննդից 7 լրիվ օր (168 ժամ) հետո:

**Մահվան պատճառների մասին** տեղեկատվության աղբյուր է հանդիսանում մահվան մասին բժշկի կողմից կազմված մահվան բժշկական վկայագրերում՝ հիվանդության, վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների վերաբերյալ գրանցումները, որոնք մահվան պատճառ են հանդիսացել, ինչպես նաև դրանց համապատասխանող թվային ծածկագրերը՝ ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգչի X-րդ վերանայման (ՀՄԴ-10)<sup>1</sup>:

**Ծնելիության/մահացության ընդհանուր գործակիցները**՝ հաշվետու ժամանակաշրջանում գրանցված, համապատասխանաբար, ծնվածների (կենդանի) թվաքանակի/մահվան դեպքերի և հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են, որոնք հաշվարկվում են 1 000 բնակչի հաշվով:

**Բնական հավելածի գործակիցը**՝ ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցների տարբերությունն է:

**Ամուսնության/ամուսնալուծության ընդհանուր գործակիցները**՝ հաշվետու ժամանակաշրջանում, համապատասխանաբար, գրանցված ամուսնությունների/ ամուսնալուծությունների քանակի և տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են և հաշվարկվում են 1 000 բնակչի հաշվով: Բոլոր գործակիցների հաշվարկներն իրականացվում են դրանք համապատասխանեցնելով տարվան հավասարազոր հաշվարկի:

**Մանկական մահացության գործակիցը**, եռամսյակային կտրվածքով՝ մինչև 1 տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն ժամանակահատվածում կենդանի ծնվածների թվաքանակին: Տարեկան կտրվածքով (տվյալների մեքենայական մշակման արդյունքով) այն հաշվարկվում է որպես 2 բաղադրիչների գումար: Դրանցից առաջինն այդ տարում ծնվածների սերնդից (որի համար հաշվարկվում է գործակիցը) մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն տարում կենդանի ծնվածների

<sup>1</sup>Բժիշկների կողմից մահվան պատճառների թվային ծածկագրումը մասնակիորեն իրականացվել է 2017թ-ին, իսկ ամբողջապես՝ 2018թ-ի հունվարից:

ընդհանուր թվաքանակին, իսկ երկրորդը՝ նախորդ տարում ծնվածների սերնդից մինչև 1 տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նախորդ տարում կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակին: Հաշվարկվում է 1 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Երեխաների մահացության գործակիցը (մինչև 5 տարեկան)**՝ հաշվետու ժամանակաշրջանում մինչև 5 տարեկան հասակում մահացած երեխաների թվաքանակի ցուցանիշի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 1 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Մայրական մահացության գործակիցը**՝ հաշվետու ժամանակաշրջանում հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում արձանագրված մահվան դեպքերի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 100 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Բնակչության տեղաշարժերի վարչական հաշվառման տվյալների սկզբնաղբյուրը** ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրամադրված՝ ըստ բնակչության վայրի հաշվառման և դուրս գրման վարչական գրանցումներով ձևավորված էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների տվյալների գրանցումներն են: Մշտական բնակչության հաշվարկի համար բնակչության տեղաշարժերի (միգրացիայի) տվյալները ենթարկվում են վերագնահատման (ճշգրտման) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա՝ Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով ձևավորված, միգրացիոն գործընթացներն արտացոլող ամփոփ տվյալների հիման վրա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գրվելու գործառույթներն ուղղակիորեն կախված են քաղաքացիների կամքից, և որպես դրա հետևանք, այդ կարգի գրանցումները միգրացիոն տեղաշարժերի ամբողջական պատկերը չեն արտացոլում:

**Առողջապահություն**

**Վարակիչ և տարափոխիկ հիվանդություններ:** Այլ սալմոնելոզային ինֆեկցիաներ՝ ներառում է տոկսիկոինֆեկցիոն հիվանդությունները՝ հարուցված տարբեր սերոտիպի սալմոնելոզներով (սալմոնելոզային գաստրոէնտերիտ և սալմոնելոզի զեներալիզացված ձևերը): Էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոկսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով՝ ներառում է հաստատված բակտերիալ հարուցիչներով էնտերիտները, կոլիտները, գաստրոէնտերիտները, աղենովիրուսներով և էնտերովիրուսներով հարուցված էնտերիտները, ինչպես նաև այլ վիրուսային էնտերիտները:

**Շճադրական:** Մարդու իմունային անբավարարության վարակի նկատմամբ իմունոֆերմենտային անալիզի միջոցով կատարված հետազոտություններից երկուսը եղել են դրական:

**Իրավախախտումներ**

**Հանցագործություններ:** Ծանր հանցագործություններ համարվում են՝ հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող դիտավորյալ արարքները: Հանցագործությունը համարվում է դիտավորյալ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները, ցանկացել է դրանք կամ գիտակցաբար թույլ է տվել այդ

հետևանքների առաջացումը: Տնտեսական հանցագործություններ են երկրի տնտեսության ոլորտում կատարվող հանրորեն վտանգավոր արաքները, որոնք նախատեսված են օրենքով:

**Հարկային հանցագործություններ:** Հարկային հանցագործությունները՝ տնտեսական բնույթի հանցագործություններ են, որոնք որակավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

**Մաքսային հանցագործություններ:** Խոշոր չափի մաքսանենգություն համարվում է 4 000 ամերիկյան դոլարից բարձր գումար ներկայացնող մաքսանենգությունը:

**Դատական ակտ՝** առաջին ատյանի վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից կայացրած դատարանի որոշումներն են, դատարանի վճիռներն են և դատավճիռներն են:

**Հարկադիր կատարում՝** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կատարողական գործողություններն են:

**Փաստացի** բռնագանձված գումար՝ դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված բռնագանձման ենթակա գումարից փաստացի կատարված բռնագանձում:

**Կատարողական վարույթով պետտուրքի բռնագանձում՝** դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուրք, որն ենթակա է պարտադիր բռնագանձման:

### **Հաշմանդամություն**

**Հաշմանդամությունը՝** օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն է, որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության:

### **Ստանդարտացում**

**Ստանդարտացումն՝** իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն է:

**Սերտիֆիկացում՝** համապատասխանության հավաստման ընթացակարգ, որի արդյունքով սերտիֆիկացման մարմինը գրավոր հավաստիացնում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

**Հավատարմագրումն՝** ընթացակարգ է, որի միջոցով հավատարմագրման խորհուրդը պաշտոնապես ճանաչում է իրավաբանական անձի իրավասությունը՝ համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև պաշտոնապես ճանաչում է արտադրանք արտադրողից (վաճառողից) կամ ծառայություն մատուցողից այդ իրավաբանական անձի անկախությունը:

*Մերտիֆիկացման մարմինը* որոշակի արտադրանքի կամ ծառայության համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

*Փորձարկման լաբորատորիան* որոշակի փորձարկումներ իրականացնելու համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

**Բնապահպանություն**

*Բնապահպանական վճարը* բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

*Բնօգտագործման վճարը* պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց ՀՀ պետական բյուջե վճարվող վճարն է:

**Գիտատեխնիկական աշխատանքներ**

*Գիտատեխնիկական աշխատանքներ* են գիտական հետազոտությունները և մշակումները, նախագծակնստրուկտորական, տեխնոլոգիական, շինարարության համար նախագծային աշխատանքները, արտադրանքի փորձանմուշների պատրաստումը և գիտատեխնիկական ծառայությունները: Գիտական հետազոտություն և մշակում համարվում է գիտական գործունեությունը, որը պարբերաբար իրականացվում է գիտելիքների հարստացման և նրանց փորձնական կիրառության նոր ոլորտների որոնման նպատակով: Գիտական հետազոտության և դրան հարակից գործունեության տարբերակիչ հիմնական հատկանիշը համարվում է աշխատանքում նորույթի առկայությունը: Մշակումներ համարվում են պարբերական աշխատանքները, որոնք հիմնված են հետազոտությունների, փորձի միջոցով ստացված գոյություն ունեցող գիտելիքների վրա և ուղղված են նոր նյութերի, արտադրանքի, պրոցեսների, հարմարանքների, ծառայությունների, համակարգի կամ մեթոդի ստեղծմանը:

**Արխիվային գործ**

*Անձնական ծագման փաստաթուղթը*՝ որևէ անձի, ընտանիքի կամ տոհմի փաստաթղթային ֆոնդի մի մասն է, իսկ մի շարք դեպքերում՝ փաստաթղթային ֆոնդ, որն ընդունված է պետական պահպանության:

*Գիտատեխնիկական փաստաթուղթը*՝ գիտական հետազոտությունների և տեխնիկական մշակումների ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև դրանց արտադրության մեջ ներդրման ուղղություններն ու մեթոդներն արձանագրող գիտական և տեխնիկական փաստաթղթերի ամբողջությունն է:

Արխիվային գործունեության մեջ ընդունված **պահպանման միավորը** փաստաթղթերի քանակի հաշվի այն նվազագույն միավորն է, որն իրենից ներկայացնում է փաստաթղթերի ամբողջություն կամ առանձին վերցված փաստաթուղթ, որն ունի ինքնուրույն նշանակություն:

**Գործը**՝ մեկ հարցի կամ գործունեության ոլորտի վերաբերող փաստաթղթերի ամբողջություն է կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին շապիկի մեջ:

**Գործերի անվանակարգն** իրենից ներկայացնում է հաշվառման փաստաթուղթ, որում նշվում է գործերի վերնագրերն իրենց պահպանության ժամկետներով: